

ՀՏԴ 338.2:378(479.25)

ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԱՆՃԵՌՆՄԽԵԼԻ ՖՈՆԴԵՐԻ ԳՈՐԾԱՌՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈՐԲԵՐՏ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Վ. Բոլոսովի անվան պետական համալսարան

Հոդվածում քննարկվում է անձեռնմխելի ֆոնդերի գործառնան ռազմավարական կարևորությունը ՀՀ բուհերի ֆինանսական կառավարման և բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգային խնդիրների համատեքստում: Հաշվի առնելով ՀՀ բուհերի պետական ֆինանսավորման ցուցանիշների նվազման միտումները՝ ՀՀ բուհերը պետք է ստեղծեն անձեռնմխելի ֆոնդերի միջոցով լրացուցիչ ֆինանսական պաշարների համալրման հնարավորություններ՝ իրենց ֆինանսական կայունությունն ապահովելու և մրցակցային առավելությունն ամրապնդելու նպատակով:

Բանալի բառեր. անձեռնմխելի ֆոնդեր, անձեռնմխելի կապիտալ, բուհերի ֆինանսական կառավարում, բարձրագույն կրթության ֆինանսավորում:

Գլոբալ տնտեսական համակարգում բուհերի մրցունակությունն ու ֆինանսական կայունությունը մեծապես պայմանավորված են ռազմավարական, ներառյալ ֆինանսական կառավարման համակարգերի արդյունավետ գործառնամբ: Այդ համակարգերը, ներառելով բազմաբաղադրիչ և սերտորեն փոխկապակցված ենթահամակարգեր ու բազմագործոն կառուցակարգեր, պահանջում են ռազմավարական կառավարման գործընթացների շարունակական արդիականացում ու բարելավում, ռազմավարական գործիքների բազմազանացում ու դրանց կիրառման արդյունավետության գնահատում: Այս գործընթացների արդյունավետ իրականացման արդյունքում կարող են ստեղծվել իրաչափ հնարավորություններ բուհերի մրցունակության բարձրացման և մրցակցային առավելության ապահովման, կայուն ֆինանսական ներհուսքերի ու ներդրումային պորտֆելի բազմազանացման խթանման համար:

Բուհերի անձեռնմխելի ֆոնդերի ծավալը սովորաբար որոշվում է դրանց ֆինանսական ակտիվների ընդհանուր ծավալով: Սակայն անձեռնմխելի ֆոնդերի արժեքը կախված է նաև այն գործառնությունների ծավալից կամ քանակից, որոնց միջոցով կառավարվում են անձեռնմխելի ֆոնդերը: Տարբեր կազմակերպատիրավական ձև ունեցող ՀՀ բուհեր կարող են ունենալ անձեռնմխելի ֆոնդեր, որոնց ծավալը պայմանավորում է

ներդրումային ուղղությունների և գործիքների ընտրությունը: Մասնավորապես՝ ծավալով մեծ անձեռնմխելի ֆոնդեր ունեցող բուհերն իրենց ակտիվների ավելի մեծ կշիռը կարող են ներդնել հեջ ֆոնդերում, պետական ու մասնավոր կազմակերպությունների արժեթղթերում, անշարժ գույքում և վենչուրային կապիտալում, իսկ ավելի փոքրածավալ ակտիվներ ունեցող բուհերն իրենց ակտիվների գերակշիռ մասը սովորաբար ներդնում են պետական պարտատոմսերում, փողի և կապիտալի շուկաների այլ գործիքներում (օրինակ՝ ցպահանջ կամ ժամկետային ավանդներում): Երկարաժամկետ ոչ ֆինանսական ակտիվներից ստացված լիզինգային վճարներից կարող են ձևավորվել և կուտակվել զգալի եկամուտներ: ՀՀ բուհերի գործունեության ուսումնասիրության արդյունքում անձեռնմխելի ֆոնդերը և դրանցից գոյացած ֆինանսական միջոցները հիմնականում ձևակերպվում են որպես ցպահանջ կամ ժամկետային ավանդներ ՀՀ առևտրային բանկերում, և ներդրումային այլ գործիքների բազմազանություն չի ապահովվում:

Անձեռնմխելի ֆոնդերի ստեղծման ու կառավարման փուլերում բուհը պետք է մշակի ու հաստատի համապատասխան ռազմավարություն և մարտավարություններ, որոնց հիման վրա կկարողանա իրականացնել թիրախային գործընթացներ ինստիտուցիոնալ մակարդակում՝ ապահովելով անձեռնմխելի ֆոնդերի հետագա արդյունավետ գործառումը: Մասնավորապես հարկավոր է՝

- վերլուծել տնտեսության զարգացման միտումները, պետության տնտեսական քաղաքականության գերակա ուղղություններն ու մարտավարությունները,
- ապահովել ռազմավարական արդյունավետ պլանավորում, որը, հիմնվելով միջավայրային գործոնների կանխատեսումների արդյունքների, պաշարների իրաչափ բաշխման ու օգտագործման վրա, կարտացոլի բուհի հեռանկարային զարգացումը, կապահովի ռիսկերի կառավարման արդյունավետությունը և կխթանի շուկայի հնարավորությունների ընդլայնումը,
- շահակիցների հետ երկխոսությամբ սահմանել և հաստատել անձեռնմխելի ֆոնդերում կատարվող ներդրումների նպատակները, ծավալն ու ժամանակային սահմանափակումները, բուհերի և շահակիցների ֆիրուցիար պարտականությունները,
- ուսումնասիրել և գնահատել տվյալ բուհի արտաքին ու ներքին շահակիցների պատրաստակամությունը՝ աջակցելու բուհի կապիտալի համալրմանը,

- անձեռնմխելի ֆոնդերի արդյունավետ կառավարման նպատակով ընտրել համապատասխան մասնագիտական հմտություններ ու փորձառություն ունեցող կառավարիչների կամ այդ գործընթացն արտապատվիրել մասնագիտացված կառավարիչներին,

- գնահատել ներդրումների համապատասխանությունը տվյալ բուհի կանոնադրական գործառույթներին ու ռազմավարական նպատակներին, ինչպես նաև գնահատել ներդրումների վերաբերյալ կայացված որոշումների արդյունավետությունը և հնարավոր հարկային հետևանքները,

- արդյունքները քննարկել բուհի կոլեգիալ մարմիններում (օրինակ՝ Հոգաբարձուների խորհրդի նիստերին):

Ջարգացած երկրներում առկա է շահույթ չհետապնդող կազմակերպությունների անձեռնմխելի կապիտալի կառավարման գործընթացները կարգավորող օրենսդրական դաշտ, որը սահմանում է նպատակային կապիտալի ձևավորման և օգտագործման պայմանները, նվիրատուների իրավունքներն ու իրավասությունները, նվիրատվության չեղարկման ու հարակից այլ պայմանները: Ընդ որում՝ նվիրատվության չեղարկումն ընդունելի է այն ժամանակ, երբ առկա են նվիրատվության ոչ նպատակային օգտագործումը փաստող գործոններ: ՀՀ բարձրագույն կրթության համատեքստում անձեռնմխելի ֆոնդերի ստեղծման, կառավարման փորձն ու կազմակերպական մշակույթը դեռևս ձևավորված չեն կամ թույլ են զարգացած համակարգային և բուհերի ինստիտուցիոնալ մակարդակներում: Դա թերևս պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ-ում դեռևս առկա չեն անձեռնմխելի ֆոնդերի գործունեությունը կարգավորող օրենսդրություն (ներառյալ ոլորտային պետական քաղաքականություն) և իրավակիրառ պրակտիկա, որոնց հիման վրա ՀՀ բուհերը կկարողանան ստեղծել ու գործառել անձեռնմխելի ֆոնդեր և զարգացնել բուհերի ղեկավարության ռազմավարական մտածելակերպը: Անձեռնմխելի ֆոնդերի կառավարման դեռևս զարգացման փուլում գտնվող մշակույթը ՀՀ-ում պայմանավորված է նաև նրանով, որ անձեռնմխելի ֆոնդեր կարող են ունենալ միայն հիմնադրամի կազմակերպահրավական ձև ունեցող ՀՀ պետական բուհերը: Ստորև ներկայացվում է ՀՀ պետական բուհերի ցանկը՝ ըստ դրանց կազմակերպահրավական ձևերի:

Ինչպես ցույց են տալիս **Աղյուսակ 1**-ի տվյալները, ՀՀ պետական բուհերի մեծամասնությունն ունի հիմնադրամի կարգավիճակ: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ թեև հիմնադրամի կարգավիճակի ձեռքբերմամբ ՀՀ պետական բուհերի ֆինանսական ինքնավարության շրջանակն ընդլայնվում է, վերոնշյալ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի կառավարման մշակույթը դեռևս թույլ է և նպատակային կերպով չի զարգացել:

ՀՀ բուհերը՝ ըստ կազմակերպատիրավական ձևերի

N	Բուհի անվանում	Հիմնադրամի կարգավիճակ ստացել է (ամսաթիվ, ՀՀ կառավարության որոշման համար)
1.	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	14.06.2012 թ. N872-Ն
2.	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	23.01.2014 թ. N80-Ն
3.	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	13.11.2014 թ. N1290-Ն
4.	«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	27.11.2014 թ. N1407-Ն
5.	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	27.11.2014 թ. N1408-Ն
6.	«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	30.06.2016 թ. N771-Ն
7.	«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ	04.02.2016 թ. N138-Ն
8.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	19.05.2016 թ. N615-Ն
9.	«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ	09.06.2016 թ. N660-Ն
10.	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	22.09.2016 թ. N1031-Ն
11.	«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ	13.04.2017 թ. N474-Ն
12.	«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ	08.06.2017 թ. N657-Ն

N	Բուհի անվանում	Դեռևս պահպանում է ՊՈԱԿ-ի կարգավիճակը
13.	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	06.10.2015 թ. N 1718-Ն
14.	«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ	07.11.2002 թ. N 1920-Ն
15.	«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ	26.12.2002 թ. N 2176-Ն
16.	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ	06.10.2005 թ. N 2400-Ն

Հարկավոր է նշել, որ սահմանափակ թվով ՀՀ բուհեր ունեն անձեռնմխելի ֆոնդեր, հետևապես դրանցում կատարված ներդրումների վերաբերյալ համապատասխան տվյալներ բուհերի գերակշիռ մասի բյուջեներում և ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չեն: Անձեռնմխելի կամ պահուստային ֆոնդերի վերաբերյալ տվյալներ առկա են եղել մասնավորապես ՀՀ չորս պետական բուհերի՝ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ), Գավառի պետական համալսարանի (ԳՊՀ) և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի (ԲՊՀ) ֆինանսական գործունեության հաշվետվություններում (տե՛ս Աղյուսակ 2):


Աղյուսակ 2

ՀՀ պետական բուհերի անձեռնմխելի ֆոնդերի ֆինանսական միջոցներ (2017-2020 թթ.)

Բուհի անվանում	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.
ԵՊՀ	156.5 մլն.	156 մլն.	200 մլն.	305 մլն.
ՀՊՏՀ	99.394 մլն.	108.331 մլն.	130.221 մլն.	-
ԳՊՀ	12.3 մլն.	9.1 մլն.	-	-
ԲՊՀ	2 մլն.	4 մլն.	5 մլն.	7 մլն.

ՀՀ-ում կրթության ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորման զարգացումների միտումները ներկայացված են **Գծապատկերում**, որտեղ ցույց է տրված, որ թեև վերջին տասնամյակում ՀՀ պետական բյուջեից կրթությանը հատկացվող ֆինանսական միջոցների ծավալն աճող միտում է ունեցել, սակայն ՀՆԱ-ում այդ միջոցների կշիռը չի աճում և միջինում պահպանվել է 2.3%-ի շրջանում: ՀՆԱ-ում այդ միջոցների կշռի պահպանման պայմաններում առավել է շեշտադրվում բուհերի ֆինանսական այլընտրանքային աղբյուրների հայթայթման և օգտագործման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ ՀՀ կրթության համակարգի զարգացմանը միտված պետական ներդրումների ոչ զգալի ծավալները ենթադրում են նաև,

որ բարձրագույն կրթության ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորումը նույնպես այդ ոլորտի հեռանկարային զարգացման լիարժեք հնարավորություններ չի կարող ունենել:



Գծապատկեր. Կրթության ոլորտում ՀՀ պետական բյուջեից կատարված և ծրագրված ծախսերը¹

Ֆինանսական աղբյուրների բազմազանեցման և նոր ֆինանսական աղբյուրների ներգրավման միջոցով ՀՀ բուհերը կարող են պետական ֆինանսավորման զգալի կրճատումների պայմաններում լուծել ինստիտուցիոնալ խնդիրներ: Հաշվի առնելով բուհերի անձեռնմխելի ֆոնդերի միջոցով լրացուցիչ ֆինանսական պաշարների համալրման հնարավորությունները՝ ներկայումս մրցունակ բուհերը պետք է չսահմանափակվեն միայն պետական ֆինանսավորմամբ, այլ զուգահեռաբար հայթայթեն և օգտագործեն ֆինանսական այլ աղբյուրներ, որոնցից առավել երկարաժամկետ ֆինանսական կայունությունն ապահովում են անձեռնմխելի ֆոնդերը:

¹ Սույն գծապատկերում ներկայացված տվյալների համար աղբյուր են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011, 2013, 2015, 2017, 2018, 2020 թվականների հունվար-դեկտեմբերին» փաստաթղթերը (2. Հարկաբյուջետային հատված) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված՝ «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը» փաստաթուղթը (ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի N 1212 -Ն որոշում):

Օրինակ՝ բուհերը կարող են անձեռնմխելի ֆոնդերից ստացվող եկամուտներն նպատակաուղղել տաղանդավոր, սակայն սոցիալապես անապահով դիմորդների՝ նրանց ուսումնառության հնարավորությունների տրամադրմանը: Այս պարագայում բուհը օգտագործում է ֆինանսավորման այլ աղբյուր՝ պետական միջոցներով ապահովվող ուսման վարձավճարները փոխարինելով անձեռնմխելի ֆոնդերից ստացվող եկամուտներով և այդպիսով հնարավորություն ստեղծելով ոչ բավարար վճարունակ, սակայն ակադեմիական և այլ մրցակցային առավելություններ ունեցող ուսանողներին ընդունվելու բուհ կամ հետազոտողներին ծավալելու արդյունավետ գիտահետազոտական գործունեություն: Միջազգային հեղինակություն ունեցող և մրցունակ բուհերի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրները նաև նպաստում են բուհերում սոցիալ-մշակութային բազմազանության ապահովմանը և հասարակական պատասխանատվության շրջանակի ընդլայնմանը, ինչպես նաև միջազգային կրթական և գիտահետազոտական տարածքներում համագործակցության շրջանակի շարունակական ընդլայնմանը:

Աղյուսակ 3-ը ցույց է տալիս ԱՄՆ-ում բուհերի անձեռնմխելի ֆոնդերի ներդրումների եկամտաբերության տարեկան ցուցանիշները 2010-2019 ֆինանսական տարիների ընթացքում [1].

Աղյուսակ 3

ԱՄՆ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի եկամտաբերության ցուցանիշների վերլուծությունը (2010-2019 թթ.)

2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
11.9%	19.2%	0.3%	11.7%	15.5%	2.4%	-1.9%	12.2%	8.2%	11.9%

Բուհերի անձեռնմխելի ֆոնդերի եկամտաբերությունը պայմանավորված է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական բարենպաստ միջավայրով: Հաջորդիվ դիտարկվում է ամերիկյան բուհերի անձեռնմխելի ֆոնդերի վրա ԱՄՆ սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը: ԱՄՆ քոլեջների և համալսարանների ֆինանսական պատասխանատուների կողմից ստեղծված ազգային ասոցիացիայի (NACUBO-National Association of College and University Business Officers) տարեկան հաշվետվությունները փաստում են, որ 2010-2019 թթ. ֆինանսական տարիների համար անձեռնմխելի ֆոնդերի եկամտաբերության ցուցանիշները շարունակաբար փոփոխվել են, մասնավորապես՝ 2010 թ. 11.9 %-ի համեմատ 2011 թ. ֆինանսական տարում գրանցվել է 19.2 % եկամտաբերության ցուցանիշ: Հաջորդ ֆինանսական տարում ցուցանիշն անկում է ապրել մինչև -0.3 բացասական եկամտաբերություն՝ հաջորդ երկու տարում կրկին աճելով 11,7 % (2013 թ.) և 15,5 % (2014թ.), ապա 2015 և 2016 թվականներին կրկին նվազելով և համապատասխանաբար դառնալով 2,4 % և 1,9 %: Մինչդեռ 2019 թ. անձեռնմխելի ֆոնդերի եկամտաբերության միջին ցուցանիշն աՄՆ-ում կազմել է 5.3 %, որը նախորդ՝ 2018 թ. համեմատ պակասել է

գրեթե 3 %-ով (2018 թ. ֆինանսական տարում վերադարձելիության ցուցանիշը եղել է 8.2 %):

Ընդհանուր մակրոտնտեսական ցուցանիշներից է երկրի համախառն ներքին արդյունքը՝ ազգային ՀՆԱ-ն, որի դիտարկումը մասնավոր տնտեսական ցուցանիշի, օրինակ՝ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի ներդրումների եկամտաբերության ցուցանիշի հետ դուրս է բերում օրինաչափություններ: Օրինակ՝ 2010 և 2011 ֆինանսական տարիներին ԱՄՆ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի եկամտաբերության գրանցված համապատասխանաբար 11.9 % և 19.2 % ցուցանիշներն օրինաչափ են համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո ԱՄՆ ՀՆԱ-ի փոփոխություններին: 2011 թ. ԱՄՆ-ում տնտեսական ճգնաժամի հաղթահարման փուլում դրական շարժընթաց էր գրանցում ՀՆԱ ցուցանիշը (15. 543 տրիլիոն), որը նախորդ՝ 2010 թ. ՀՆԱ ցուցանիշի (14.992 տրիլիոն) համեմատ աճել է 551 միլիարդ դոլարով (World Bank): Այսպիսով, ճգնաժամի հաղթահարման ընդհանուր դրական շարժընթացը 2010-2011 թթ. նպաստել է նաև ԱՄՆ-ում մասնավոր բուհերի ֆինանսական ցուցանիշների, այդ թվում՝ անձեռնմխելի ֆոնդերի եկամտաբերության բարելավմանը:

Անձեռնմխելի ֆոնդերի ներդրումների եկամտաբերությունը պայմանավորված է բազմաթիվ այլ գործոններով, օրինակ՝ բուհերի թիրախային ներդրումային քաղաքականության իրականացմամբ, ներդրման աղբյուրների (պետական, մասնավոր, օտարերկրյա) բազմազանությամբ, ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի գործառնամբ, անձեռնմխելի ֆոնդերի կառավարչի փորձառության բարձր մակարդակով և այլ գործոններով: Հարկավոր է նշել նաև, որ երկրի տնտեսական վիճակի ընդհանուր միտումներն անդրադառնում են նաև բուհերի անձեռնմխելի ֆոնդերի եկամտաբերության վրա: Հետևապես, կարելի է եզրակացնել, որ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի համակարգի կայացումը պայմանավորված է նաև տվյալ երկրի տնտեսական զարգացման համատեքստով, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական և այլ գործոններով: Ընդհանուր առմամբ, պետք է հաշվի առնել նաև այն, որ բարձրագույն կրթության ֆինանսավորումը բարդ և բազմամակարդակ գործընթաց է, որը պայմանավորված է հասարակության բարեկեցության և առաջընթացի ապահովման բազմաթիվ գործոնների փոխկապակցվածությամբ:

Հաշվի առնելով, որ պետական ֆինանսավորման հնարավորությունները սահմանափակ են, և ՀՀ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի գործառնման միջոցով կարելի է լուծել բուհերի ֆինանսավորման մի շարք առաջնահերթ խնդիրներ և խթանել բարձրագույն կրթության ու գիտության ոլորտների համընթաց զարգացումը՝ ՀՀ կառավարությունը և բուհերը պետք է առավել մեծ ակտիվություն ցուցաբերեն համակարգային և ինստիտուցիոնալ մակարդակներում անձեռնմխելի ֆոնդերի ստեղծման,

գործառնման ու դրանց կառավարման գործընթացների և համապատասխան մշակույթի զարգացման ուղղությամբ: Շեշտադրելով ՀՀ բուհերի ֆինանսական կայունության ապահովման գործընթացներում անձեռնմխելի ֆոնդերի կարևորությունը՝ ստորև ներկայացվում են անձեռնմխելի ֆոնդերի գործառնման գործընթացների բարելավման առաջարկություններ.

- բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունում ներառել բուհերի անձեռնմխելի ֆոնդերի վերաբերյալ իրավական կարգավորումներ, որոնք կսահմանեն անձեռնմխելի ֆոնդերի ստեղծման, գործառնման և կառավարման վերաբերյալ հիմնադրույթները,

- բուհերում անձեռնմխելի ֆոնդերի և ֆինանսական կառավարման գործընթացներում ներառել ներդրումային գործիքների մշակմանն ու բազմազանեցմանն ուղղված ռազմավարական միջոցառումները [2],

- կատարել մրցունակության վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների ուսումնասիրություններ և կարիքների գնահատում տարբեր ոլորտներում՝ տեղորոշելու շուկայում բուհերի սեփական դիրքն ու գնահատելու մրցակցային առավելության ձեռքբերման հնարավորությունները,

- ստեղծել ազգային մակարդակում ՀՀ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական հարթակ, որի գործառնության շրջանակը կներառի բուհերի գործունեության կայունության ապահովման համար անհրաժեշտ ներդրումների, նվիրատվությունների, նվիրաբերությունների իրականացմանն ու բարեգործական նպատակներով կատարվող ֆինանսավորման տվյալների վերլուծությունները և կբարձրացնի բուհերի գործունեության ու շահակիցների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ ՀՀ բուհերի գործունեության բարելավման և ճգնաժամային իրավիճակներում ֆինանսական խնդիրների արդյունավետ հաղթահարման խնդրում կարևոր է հաշվի առնել անձեռնմխելի ֆոնդերի ստեղծմանն ու գործառնման հնարավորությունները: Ավելին, դրանց միջոցով ՀՀ բուհերը կարող են ապահովել մրցակցային առավելություն, ֆինանսական կայունություն, արտաքին գրավչություն և հեռանկարային զարգացում՝ միտված աշխատաշուկայի պահանջներին համապատասխան արդյունավետ կրթական ծառայությունների մատուցմանը և որակյալ մասնագետների պատրաստմանը: ՀՀ պետական և ոչ պետական բուհերի ֆինանսական կառավարման համակարգային և ինստիտուցիոնալ խնդիրները դեռևս լիարժեք լուծում չեն ստացել, և հատկապես անհաղթահարելի ուժի պայմաններում այդ բուհերի ֆինանսական կայունությունը՝ որպես կանոն, դառնում է ռիսկային: Այս պարագայում ՀՀ բուհերը պետք է մշակեն առանցքային ներդրումների կատարման այնպիսի ռազմավարություններ, որոնց իրականացմամբ հնարավոր կլինի՝

- ստեղծել ու գործառել անձեռնմխելի ֆոնդեր և սահմանել դրանց կառավարման գործառութային շրջանակներն ու դերակատարներին,
- զարգացնել անձեռնմխելի ֆոնդերի կառավարման մշակույթը,
- ընդլայնել բուհերի և շահակիցների միջև հաղորդակցման կապերը՝ անձեռնմխելի ֆոնդերում հնարավոր ներդրումների ծավալը մեծացնելու և դրանց կայունությունն ապահովելու նպատակով,
- ապահովել բուհերի ֆինանսական և անձեռնմխելի ֆոնդերի կայունությունը (ներառյալ ներդրումային գործիքների և ուղղությունների կառավարումը), բազմազանեցնել անձեռնմխելի ֆոնդերում կուտակված ֆինանսական պաշարները և դրանք նպատակաուղղել բուհերի կանոնադրական ու ռազմավարական նպատակների իրականացմանը:

Վերոնշյալը փաստում է, որ անձեռնմխելի ֆոնդերի արդյունավետ գործառումը ՀՀ բուհերի համար ռազմավարական նշանակություն ու կարևորություն ունի՝ հաշվի առնելով և՛ բուհերի ֆինանսական կայուն ներհուսքերի ապահովման սահմանափակ հնարավորությունները, և՛ ՀՀ օրենսդրական դաշտում անձեռնմխելի ֆոնդերի կառավարման առնչվող կարգավորումների անհստակությունը: Հետևապես, հարկավոր է պետական մակարդակում մշակել անձեռնմխելի ֆոնդերի գործառման պետական քաղաքականություն, որի հիման վրա ՀՀ բուհերը կկարողանան նույնպես մշակել և գործառել ինստիտուցիոնալ քաղաքականություններ, ռազմավարություններ և գործառություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **National Association of College and University Business Officers (NACUBO)**, 2020 U.S. Educational Endowments Report 5.3 Percent Average Return in FY19 (<https://www.nacubo.org/Press-Releases/2020/US-Educational-Endowments-Report-5-3-Percent-Average-Return-in-FY19>)

2. **Reiss, D.** 2017. *What You Should Know About Dividend Reinvestment Plans.* U.S. News & World Report (<https://money.usnews.com/investing/articles/2017-01-12/what-you-should-know-about-dividend-reinvestment-plans>).

СТРАТЕГИЧЕСКАЯ ВАЖНОСТЬ ФУНКЦИОНИРОВАНИЯ ЭНДАУМЕНТ-ФОНДОВ ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЙ РА

РОБЕРТ ХАЧАТРЯН

Государственный университет имени В. Я. Брюсова

В современной глобальной экономической системе конкурентоспособность и устойчивое развитие высших учебных заведений зависят от эффективности систем стратегического и финансового управления. В настоящее время вузы Республики Армения (РА) сталкиваются с рядом финансовых проблем из-за нестабильности социально-экономической сферы и тенденций снижения показателей государственного финансирования высшего образования. В этом контексте, подчеркивая необходимость эффективных решений финансовых проблем, в данной статье обсуждается, как вузы РА могут значительно повысить уровень финансовой стабильности и эффективность финансового управления путем создания и функционирования эндаумент-фондов.

Ключевые слова: эндаумент-фонды, капитал эндаумент-фондов, финансовое управление в вузах, финансирование высшего образования.

STRATEGIC IMPORTANCE OF FUNCTIONING ENDOWMENT FUNDS OF RA HIGHER EDUCATION INSTITUTIONS

ROBERT KHACHATRYAN

Brusov State University

In the current global economic system, the competitiveness and sustainable development of higher education institutions (HEIs) depend on the operation of efficient strategic and financial management systems. HEIs of the Republic of Armenia (RA) currently encounter a number of financial problems due to the instability of the socio-economic field and the tendencies of decreasing indicators of state funding of higher education. In this context, highlighting the need for effective solutions to the financial problems of the HEIs, the current article discusses the means through which the RA HEIs can significantly increase the level of financial stability and efficiency of financial management by establishing and operating endowment funds.

Keywords: endowment funds, endowment capital, financial management of higher education institutions, higher education funding.

*Ներկայացվել է խմբագրություն 12.03.2021
Երաշխավորվել է տպագրության 02.05.2021*